Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 11.11.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը,
(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)
հետևյալ կազմով.
նախագահությամբ՝ իրավ. գիտ. թեկնածու Կարեն Հակոբյանի
մասնակցությամբ անդամներ՝ դատավոր Դանիել Դանիելյանի
դատավոր Աննա Դիլբարյանի,

քննարկելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ հավակնորդի կողմից բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հավակնորդը բողոքարկել է վարչական դատավարության բաժնի 30-րդ, վարչական իրավունք բաժնի 19-րդ և 44-րդ հարցերը:

Հավակնորդի բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում քննարկելով բողոքը՝ Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

<u>Վարչական դատավարություն.</u>

Հարց 30

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից 4-րդ տարբերակը, այն է՝ *«այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի հրապարակման պահից, բացառությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքի»*, մինչդեռ՝ ներկայացվածներից ճիշտ տարբերակը 3-րդն է, այն է՝ *«այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի պաշտոնական հրապարակման պահից, բացառությամբ այն դեպքի, երբ նման որոշում չընդունելը կարող է ծանր հետևանքներ առաջացնել հանրության կամ պետության համար»*, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման համաձայն՝ անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր իրավաբանական ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի **պաշտոնական** հրապարակման պահից (ex nunc), բացառությամբ նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի (այն է՝ նորմատիվ իրավական ակտը վարչական դատարանի կողմից կարող է անվավեր ճանաչվել այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից, եթե նման որոշում

չընդունելը կարող է ծանր հետևանքներ առաջացնել հանրության կամ պետության համար), իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր կամ ոչ իրավաչափ ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի եզրափակիչ մասը տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օր հետո **պաշտոնապես հրապարակվում է** այն **տեղեկագրում**, որում, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հրապարակվում է անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի տվյալ տեսակը: Այսինքն՝ անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր իրավաբանական ուժը քննարկվող դեպքում կորցնում է ոչ թե այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի **դատական ակտի հրապարակման պահից**, այլ՝ տվյալ դատական ակտի համապատասխան **պաշտոնական տեղեկագրում հրապարակման պահից**:

Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

<u>Վարչական իրավունք.</u>

Հարց 19

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից 2-րդ տարբերակը, այն է՝ *«դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը. դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից. գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ. դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ. փոխվել է դիմողի կարգավիճակը, որն օրենքի ուժով բացառում է դիմումով հայցվող վարչական ակտի ընդունումը. վարչական վարույթը կասեցնելու՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետում չի վերացել վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը. դիմումն անթույլատրելի է, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում»*, մինչդեռ՝ ըստ ուղենիշի՝ ներկայացվածներից ճիշտ տարբերակը 3-րդն է, այն է՝ *«դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը. դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից. գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ. դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ. փոխվել է դիմողի կարգավիճակը, որն օրենքի ուժով բացառում է դիմումով հայցվող վարչական ակտի ընդունումը. վարչական վարույթը կասեցնելու՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետում չի վերացել վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը. դիմումն անթույլատրելի է»:*

Նկատի ունենալով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության իրավակարգավորման համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է նաև նույն օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, իսկ 70-րդ հոդվածում նախատեսված են վարչական վարույթը կարճելու երկու ինքնուրույն հիմքեր, միաժամանակ հաշվի առնելով, որ հարցադրմամբ պահանջվում է նշել սպառիչ պատասխանը, Հանձնաժողովը գտնում է, որ

ներկայացվածներից ճիշտ պատասխանը հավակնորդի նշած 2-րդ տարբերակն է, ուստի գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը պետք է դարձնել 1 միավոր:

Հարց 44

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից 1-ին տարբերակը, այն է՝ *«ինչպես ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի, այնպես էլ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում»*, մինչդեռ՝ ներկայացվածներից ճիշտ տարբերակը 2-րդն է, այն է՝ *«միայն ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում»*, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ՝ «Պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար» վերտառությամբ բաժնում զետեղված իրավական նորմերի կարգավորումից հետևում է, որ ոչ գույքային վնասի հատուցում կարող է պահանջվել միայն ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում: Ընդ որում՝ Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ իրավաչափ վարչարարությամբ անձին ոչ գույքային վնաս չի կարող պատճառվել, ուստի հավակնորդի կողմից վկայակոչված՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 109-րդ հոդվածում ոչ գույքային վնասի մասով բացառություն չնախատեսելը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ոչ գույքային վնասի հատուցում կարող է պահանջվել նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում:

Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքարկման հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 4879 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ Վարչական իրավունք բաժնի 19-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր:
2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԻԼԲԱՐՅԱՆ